



ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Քաղաքական, Բանասիրական եւ Զուարճայիվ

Խմբագրապետ Մ. ՍՈՒԼԹԱՆՅԱՆ

ԺԱՂՏ Տարի, Թիւ 16

ՇԱԲԱԹ

24 Հոկտեմբեր, 1898

ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Ծաղիկի բաժանորդագինն է **Տարեկան՝ Պոլ** տոյ համար 40, Գաւառներու համար 50 դան: **Վեցամսեայ Պոլ** տոյ համար 25, Գաւառաց համար 30 դան: **Հասը 30 փարայ:** Բաժանորդագրութիւնը պիտի վրայ է, ծաղիկան բաժանորդները պիտի ստանան **52** եւ վեցամսեայները՝ **26** քիւ **Ծաղիկ:**

Հանրոգոս նիւթերու վերաբերեալ յօդուածներ եւ քրական յօդուածներ շնորհակալութեամբ կ'ընդունուին:

Ծաղիկի քննադատները **Պաղտատեան Գրաստան** կենիւր կը կրեն **1908** — Ծաղիկի վերաբերեալ ամէն ինչ պէ՛տ է ուղղել **Պաղտատեան Գրաստան**, Կ. Պոլիս, Սուրբան Համամ, քիւ 14:

ԱԼ ՍԱՆԱ ՊԻՐ «ԹՈՐԳՈՍ» ՏԱՅԱ

Պատուելիութեան անկումի եւ մօնշէրութեան ծնունդ առած միջոցներուն է որ միջախին մէկը, Մարկարա կ'երթայ իբրեւ Ուսուցիչ: Պարոն Թեմեւսօյիկը ինքզինքը ծախելու համար, ի մէջ այլոց, կը մտածէ տղոց անունները փոխել: Մարկոս, Թորոս, Կիրակոս, ի՞նչ կոշտ անուններ: ո՛չ, ատոնք չեն ըլլար, հապա՞: — Հայկ, Արամ, Տիգրան, Թորգոմ պիտի ըլլան, մանաւանդ, Թորգոմ, Թորգոմ, դարձեալ Թորգոմ, Քանի մը օրուան մէջ աշակերտք իրենց տղեղ ցնցոտիները — հին անուններ, ի բաց Թօմափելով՝ սիրունիկ անուններով կը մկրտուին եւ շատ մը Թորգոմներ, Տիգրաններ, Փիրայրներ յանկարծ մէջտեղ կ'ելլեն:

— Մարկո՛ս. հոս եկուր:

— Աղապա՛, ես Մարկոս չեմ:

— Հապա ի՞նչ ես, տղա՛ս:

— Աղապա, ես Տիգրան եմ, Միջախն անանկ րսաւ:

Աս տեսակ մը խնդիր:

— Ի՞նչ ամբարշտութիւն, կը կրկնեն Տէրպապաները, Աւագանին անունն ալ փոխել կ'ըլլա՛յ, ալ ի՞նչ օրերու պիտի հասնինք:

Աս ալ տեսակ մը խնդիր:

Սակայն բուն խնդիրը հոն չէ:

Մեր Պարոն ուսանողները սովորութիւն ունին մի-

տոյնը իրենց, ուր որ ալ ըլլայ, նոյն խաչ այգիները

Սորժարանին արձակուրդէն ետքը, օրին մէկը ատոնք այգիի մը մէջ են, որուն տէրը բացակայ է:

— Տղա՛ք, կը կրկնէ չարածնիներէն մէկը, Միջախն ըսաւ Թէ Աղամ եւ Եւա արգիլուած պտուղէն կերան, եկէ՛ք, մենք ալ սա սայորէն ուտենք, ի՞նչ կ'ըլլայ: «Որդի հարազատ զնմանութիւն հօր իւր բերէ»:

«Ասաց եւ եղեւ»:

— Թորգո՛մ, Թորգո՛մ, շուտ րիւէ, վար իջիր, այգիին տէրը եկաւ, կը կրկնեն ընկերները միաբերան եւ աջ եւ ահեակ կ'սկսին փախչիլ:

Ամբակում աղան — այգիին տէրը — ծառը ելլողին կողմը երթալու վրայ է, ու մէյ մըն ալ ի՞նչ տեսնէ, իւրաքանչիւր Թուփի տակէն մէկ մէկ տղայ:

— «Ա՛լ սանա պիր Թորգոմ տահա, ա՛լ սանա պիր Թորգոմ տահա, ըսելով կ'սկսի հարուածել աջէն ձախէն:

Գողերու երամը կը փախչի:

Ու Ամբակում աղա, կրակ կտրած, մերձակայ սրճարանը հասնելով կ'աղաղակէ:

— «Գարտաշ, տէմէ, պիր Թորգոմ ալայընա ուղրատըք, Թորգո՛մ, նէ գատար Թորգոմ, ազ տահա եէթիշմէմիշ օլսա խոիմ, պաղտա մէյվէ գալմա-յանազ խոի:

* * *

Մեր Պատ. Ուսումն. Խորհուրդին բանը գործն

ալ, սա Մալկարացի Ամբակում աղային հեֆֆեաքը դարձաւ :

«Այ սանն, պիր Թորգոմ տահա» :

Ամէն օր, ամէն շաբթու վարժապետի կռիւ, Հոգաբարձուի խնդիր ունի :

Աս ինչ է. — Կէտիք փաշան :

Աս ինչ է. — Պալաթ :

Ան ինչ է. — Բերա, եւայլն, եւայլն :

Ու Պատ. Անդամները տոկուն, անվեհեր, ժպիտի շրթունս գործի վրայ են :

— Ո՞ւր, խէր ըլլայ :

Աղբւր, չես ըսեր, նորէն վէճ կայ, վարժարանի աշակերտաց քուէին պիտի դիմենք :

— Նոր սխաբէմ :

Հապա սա մառախոլը. — Ի՞նչ փորձանք, շոգենաւները առտուն կանուխ չեն բանիր, եւ ջերմեռանդ Ուսումնականներուն գործին արգելք կ'ըլլան : Իրաւ որ սա քաշուելիք ՏէրՏ չէ :

Աստուած վերջերին բարի ընէ :

Ս

ՎԱՐՁՈՒ ԿԸ ՏՐՈՒԻՆ ԾԱՂԻԿԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԷՆ ՇԵՏԵԻԵԱԼՆԵՐԸ

Վարձու տուն մը վեց սենեակով, հորով եւ պարտէզով :

Վարձու լրագիր մը իւր էջերով, գաղափարներով եւ սկզբունքներով :

* * *

Վարձու Թաղական մը, որ պատրաստ է Ատենապետին ամէն մէկ ակնարկին, «Էլվէթ էֆէնտիմ, պէլի էֆէնտիմ, էօյլէ տիր էֆէնտիմ» պատասխանելու :

* * *

Վարձու Խմբագիր մը, որ պատրաստ է ուզուած խնդիր մը պաշտպանելու : Գիները կը սակարկուին խնդրոյն կարեւորութեան համեմատ :

* * *

Վարձու Փաստաբան մը, որ պատրաստ է սնանկանալ ուզողներուն տեսութիւններ պատրաստել, ապրանքներն փախցնել, եւ եթէ սնանկանալու փափաք չունին, ներշնչել իսկ սոյն փափաքը :

* * *

Վարձու Վարդապետ մը, որ պատրաստ է հանգուցեալի մը չունեցած բարեմասնութիւնները մինչեւ երկինք հանելու :

* * *

Վարձու աչքեր, ականջներ, բերաններ ու խիղճեր շատ ու միշտ պատրաստ կը գտնուին :

* * *

Վարձու՝ Մամիկիս մասալը :

* * *

Վարձու՝ Ուսումնական Խորհրդոյ տեսած երազներուն հաւաքածոյն :

* * *

Վարձու՝ Բերայի մասալներուն եւ մասմագէշներուն սխաբէմը :

ԱԶՄՈՏԷ

ԳՐԶԻ ԶԲՕՍԱՆՔՆԵՐ

ՄԵՐ ԱՂՁԻԿՆԵՐԸ

Բ.

(Շարունակութիւն 15 թիւէն)

Երբ երկու կողմն ալ մանչ ու աղջիկ իրենց որոշումը կընեն տոմանանալու նկատմամբ, միւս կողմէն ալ ըսենք թէ պէտք է մէկ կողմ նետել կարգ մը խենդ ու խելառ սովորութիւններ, որոնք օգտակար ըլլալէ շատ հետի լինելով մինչեւ իսկ վնասակար կըլլան :

Երիտասարդներուն դատը պաշտպանելու նկատակով չէ որ կըսենք, բայց լաւ չըլլար որ մեր աղջիկներն ալ բոլորովին պարզ ըլլան իրենց հագուստին ու կապուստին մէջ : Խօսքերնիս մասնաւորելով գործաւ որուհի դասակարգին վրայ, իրենց հազար նեղութիւններով շահած դրամին ինչո՞ւ կարգ մը քուրչի կտորներու մսխեն, լաւ չըլլար որ խնայեն եւ ամուսնացած աստեղին փոխանակ կարգ մը չըջազգեստներու եւ գլխարկներու, չէնքով չորհրդով կարասի ունենան եւ տուն տեղ կազմելու վիճակին մէջ ըլլան :

Նպատակնիս պարզադրութեամբ ջատագովել է, հէգ աղջիկ քու պարզունակ անմեղ դէմքիդ կը վայլէ պարզ չըջազգեստը եւ ոչ թէ կարգ մը թիւշերով եւ պուլճոններով ֆիստաններ ու մանդօներ կամ քու դէմքիդ սառնայի կերպարանքը տուող կէս կանգուն բարձրութեամբ գլխարկներ, հաւատացէք դէմքերնիդ ալապուճուք կը դառնայ այդ գլխարկներով եւ երբ դուք որ շատ դեղանի պիտի ըլլայիք պարզ հագնելով, շատ ու շատ դառն պիտի ըլլայ ձեր կեանքը, օրինակներ պակաս չեն : տեսած եմ տուններ, որոնց առջեւ պարսիկ հաքիքներ

կեցած՝ կը պոռայ կը կանչէ եւ իր դրամը կը պահանջէ։ Աղջիկը կ'աղաչէ որ պարսիկը քանի մը օրէն գայ առնուլ իր դրամը։ անիկայ կը պոռայ, կը կանչէ, աղջիկը կ'ամբնայ կը կարմրի (եթէ սովորութիւն ունի կարմրելու), բայց ի դուր, ան կը պահանջէ եւ իրաւունքն է պահանջելու քանի որ տուաւ ապրանքը։ Ընդունելով այն սովորը որ պարսիկը անխղճաբար կը պահանջէ անկէ։

* * *

Ահա մեր գործաւորուհի աղջիկներու կեանքէն քանի մը էջեր։ ղլխաւորաբար գրեցինք ցոյց տալու համար թէ անոնք որ համեմատաբար պարկեշտ են, ինչո՞ւ սակայն չեն կրնար ամուսնանալ, քանի որ պճնասիրութիւնը գոյութիւն ունենայ, երիտասարդները կասկածոտ պիտի ըլլան ամուսնութեան համար եւ հետեւանք պիտի ըլլայ անբարոյականութիւն, որ դժբաղդաբար շատ ու շատ կ'երեւի մեր մէջ, ու անբարոյական մարդը իրեն տարրին համար օգտակար չըլլալէն զատ դժբաղդաբար նոր սերունդին ալ վնասել սկսած է, որովհետեւ ցաւալի է ըսել, սակայն ճշմարիտ է որ նոր սերունդն ալ կորսուելու վրայ է։ անբարոյական տղմին մէջ թաթխուելու վրայ է, եթէ չը փութանք առաջը առնուլ այն հոսանքին որ կը վազէ շուտով։

Վ. ԶԱՐԻԱՐԵԱՆ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՊՏՈՅՏ ՄԸ

Կիրակի առաւօտ մ'էր։ Թաղէոս էմմի այսօր սովորականէն կանուկ ելելով, բազմած էր թաղային սրճարանի մը անկիւնը, խորունկ խորունկ կը մտածէր, թոքերը հազորդակցութեան մէկ դրամ նարկիչի մը, որմէ անընդհատ մուխեր պոռկկացնելով կը հականկիւն չորս կողմը, գրեթէ ժամ մը վերջը իր վաղմի բարեկամ՝ Նազարէթ էմմի երեւցաւ։ ածապարանօք եկած ըլլալուն տաքցած ու քրտնած էր, հեւալով սրճարանէն ներս մտաւ։

— Բարի լիօս գայ վերադառ, աղա,

— Աստուծօ բարին, էֆէնտըմ։

— Շատոնց կա՞յ իւր կու սպասես։

— Մարդ, լըման սընէթ մի կանէ։

— Ներողութիւն, թէթոս էմմի։ էրէկ գըչեր խապէթա կու կարգայի, արտաքին ու ներքինները լմնցունեմ ըսի վէ լաքին լաւ մի քունատ մունացի, ըս առաւէտ դուխս բարձէն չէր իւ ելէր։

— Հըմայէկս ըտի մէկդի թէոդ, ֆէօթուղրաֆճուն տի եթա՞նք։

— Քչտիյ մը սապը անէիր, խէյվէ մի խմեմ իւր խելքիս գլօխս գայ։

— Եօրկիէօ, սէտէ պիր խէյվէ բիչիւր։

— Սիմաի, կէլիօս ցօռպածի։

Տասը վայրկեան յետոյ սրճարանէն մեկնած էին։ Կէս օրուան մօտերը Ղալաթիա թիւնէլի փողոցը երեւցան, ածապարանօք կ'երթային։

— Նազարէթ էմմի, ըսդին ուրո՞ւ կէեանք։

— Համբիւրէ ուր ըսիմ, հեղ մը սը գունէն ներս գու՞նայ ուր տեսնես։

— Ըսի համանաուրայի վակունները ի՞նչ տի ըլլին։

— Էֆէնտըմ, ըտէօր թընիլ կըսեն, ըսկից կու նըստիս վէ Պէկօղլի դիւրս կելես։

Երկու տոմակ առնելով բազմեցան վակունի մը անկիւնն ու սկսան մէկ մէկ սիկառ ծխել։

Քանի մը վայրկեան յետոյ ճամբայ կ'ած էին։

— Վէօտըդ պազնիմ թէթոս էմմի, դէտիյնը անցանք։

— Քչտիյ մը սապը արէ, հրմայէկս դիւրս տի ելենք։

— Անի չէ ըմմա, ըսի վաղունները նապ կուլլի ուր հարաքէթ կանեն վէ ըսի խաւար ճանապարհը ի՞նչ կերպով բացեր են, քէրէմ անէիք ու քչտիյ մի մալիւմադ տայիք։

— Էֆէնտըմ, կըսեն իւր վեցհազարեակի վասըթա՞յէօլ թախում մի կատու շանու աղաք քեզմեզ աղէկներուն հետ մէկին եղէր վէ լանկէկ մի ճանապարհ բացեր են, ըսի վաղուններն էլ թախում մի ձիեր կու քաշեն։

— Հըպա ընտէօ՞ր կուլլի ուր չենք տեսներ։

— Ճանապարհը լէօս չէ ուր ֆարդ անիս։

— Բէճա կանիմ, բան մ'էլ հարցնեմ. ըտի ճամանաուրան նապ կուլլի։

— Էֆէնտըմ, ըտկից խօլէյ բան չուգայ, էրկաթը էրկաթին վրայ են հեծողներ՝ կրայն էլ տակնին տուեր, հարկ է իւր տի քալէ։

— Էֆէնտըմ Նազարէթ պէկ, թէվէպէլիւ չէ իւր քեզ կու սիրեմ։

Կառախումը կեցած ըլլալուն դուրս ելան եւ ուղղակի լուսանկարչատուն մը գացին։

— Սապախար խէյր օլսուն մուշու, պիղիմ ֆու՞թէօղրաֆը չէկէճէքսիւն։

— Յօկ էյի օլուռ, պոյուռն օթուռներդ։ Նա՞սլ օլաճադ... նէ՞ պոյտա, պի՞ւսթ իսթէյօսունուդ։

— Բան մի չեմ հասկնար իւր իչ կըսէ։ Պաքսանիս. թիւրքճէ խօնուչ։

— Իսթէ պէն տէ թիւրքճէ սէօյլէն։

— Էյի ըմմա պիղ աննամազուխ։

— Զարար եօք պիր տահա սէօյլէն, պի՞ւսթ իսթէն եօքսա...։

— Ըհա շու բիւսդ տէտիւղին նէ՞ օլաճախ։

| (Մէջքը ցուցնելով)։ Պունտան ասաղը՝ իսթէրսիւնիդ։

— Պաքսանա մուշու, պաշտան աեաղա խըտար։

— Բէք կիւզէլ, նէ՞ պոյ։

— (Ափը ցուցնելով)։ Ահա շու խըտար օլսուն։

— Պէն անլամազ էօյլէ, վար մինեօն, քառք վի՞զիդ, քապինէ, պուտուառ, բօօմընատ, սալօն...։

— Նազարէթ էմմի ընչափ կու բարկանամ ուր հատ մը քնթին բերնին ինիմ, ընտէօ՞ր ալ քէֆէղէ մարդու ըրաստ էկինք։

— Պէն անլատի, տուր սիմտի օլաճաք։

Ներս երթալով տարբեր մեծութեամբ լուսանկար պարունակող ալպօմ մը բերաւ, որուն մէջէն մէկ հատին վերջապէս որոշում տուին։

— Սիրտի պէն մաքրեմ հաղորդաւոր, պայուրն:

— Հրմայէկս Նազարէթ էմմի բան մի կայ, կոնակ կոնակի կայինք իւր իմ չալվարիս ու քու սալթաիդ էն տամբ բարէօվ ուլլի, քիւմիլի պէկս, չալվարիս չուս վելիք տեղը ծակ մի կայ:

— Բարէօվ կուլլի:

Ու մեքենային առաջը երթալով կոնակ կոնակի տունն եւ կեցան:

— Նէ՞ տիւ պու . . . ! սիւզ ետիիյօռ ալաօօս:

— Կու հայր՝ս, թէրպիյէսուզը անամօք կու ըսէ: Հէրիֆ աղղունու քէնտինէ թօբարլա, սապախլայուն պէլա չըխարդմայալում:

— Ամա պէն սէօյլէտի, սիւզ անլամազ, սիւզ էյլէնէ-ծէ՞ք պուռտա:

— Էմմի, հըտէ քալէ եթանք, եօխսա փէօրձանքի տի հանդիպիմ ըսի իշու զաւկին հետ:

Ու վայրկենական կերպիւ վար իջնելով անհետացան. շունչերին Գուլգարու առած էին, ծովեզերքը կը չըջագայէին՝ գոնէ քիչ մը զովանալու համար:

— Նազարէթ էմմի կու հայր՝ս, դէմերնիւս կնիյ մի վէ պայվական աղջիյ մի կիւգան, հարֆանտաղութին մի պի անիմ, ի՞նչ կու զրուցես:

— Թէթոս էմմի, էսէօր դիւ բան մի ես երկէր, չ՛գիտեմ ի՞նչ է մէրէմդ, կու հայիմ ուր փէօրձանք կու փընտռես:

— Փէօրձանքը իշ տըլլայ մարդ, ըսպիսի բաները ըստեղաց զանցան են:

— Մանէր կու ըսիմ՝ օր իս կու սէպէս, կու կըրկ-նեմ իւր գլխուդ ելլելիք մի կայ:

— Ահա՛ եկին: Ա՜ֆ կու անէք խաթուն, օր միւս ասատէ կանիք նը սը ֆոֆսուկս (սիկառ) վառեմ:

— Աղբարս, խահվէն չե՞ս տեսնար կոր:

— Օր քու մէ վառեմ ի՞նչ կու ուլլի:

— Է՛ նա, վառէ . . . :

Վառելով ու մուխը քթէն բերնէն դուրս հանելէ ետք՝

— Տըկին, աֆ կու անէք ըմմա, ըսի խանիմ աղջիկը քէօ՛ւ է:

— Հա. ի՞նչ կայ քի . . . :

— Ներողութիւն, լաքին նուր ճեմալին հայրան էղի:

— Վա՛յ, էրկու աչկդ քէօրնայ խըմպըլ . . . :

— Նազարէթ էմմի, հըտէ խզլի քալէ եթանք, ըսի զօղի կնիյ կու տեսնիմ. կուլլի իւր էվէլօք բան մի կանէ:

— Հէրիֆ, ես քեզի չըսի՞ ուր աղկէկ բան մի չըլ-լիր:

— Մեղքը չլիկը, պէքեար եմ:

— Էֆէնտըմ, կարգիւվէ:

— Կու վախէմ ուր էվ երիանի մի կու հանդիպիմ:

— Հրմայէկս կուգես նը՝ ըտէօր խօլէյը կայ:

— Ընտէօր:

— Էֆէնտըմ, ժամանակ մի Արեւելք խաղէթասիին մնջուկը խարդաղէօր բան մի գրաէթ արի: Սիպլի ա-նիւնէօվ մէյ մը խաթում մի իզահաթներ կիւտայ ամիւս-նութան մասին. տընա լայուլիւն կայ, գիտցածուն դո՛ն չըլլալով ֆռանկիւիւզ, ինկիլիւզ, հոռէօմ վէ թախում մի

էճնէպի կնիյներէ էլ էսբանին վրայէօվ իզահաթ սւզեր է՛ ընոնք էլ տըվեր են: Ծառայականիդ իւր հարցնելիւ ըլլիք նը, շատ լաւ բան մի արած կու ըլլաք՝ օր երաք ըտի գրէօղէն նասիհաթ մի առնիք:

— Շնորհակալ եմ, լաքին ըտի Սիբիլը վէ՛վ կուլլի:

— Էֆէնտըմ, կըսեն իւր մանտամա մին է երկեր:

— Օր ըտանկ է իսէ նը, ըտի ուլլէլիք բան չէ, քիւ-չիւն Աստուած ողէօրմի հոգուն, Աշըխէնց Աբիսողէօ-մը . . . :

— Յիչէօղաց հոգուն էլ, էֆէնտըմ:

— Ամմէն. կըսէր իւր կնիյներուն մաղը էրկան եւ խելվընին կարճ կուլլի, լէօս իշնէ կերիզմանը:

— Լաքին հիմայվանները տարբեր են, կու հասկո-նա՞ս:

— Բէճա կանեմ, Նազարէթ էմմի, չըլլի ուր հեզ մի ալ ըսի մէսէլէն թէքրար անիք, գիտցիք իւր խաթրս տի մնայ:

— Շատ բարէօվ, մեղքը չլիկիւ: Է՛ էֆէնտըմ, ծա-ռայականիդ միւսատէ, մնաք բարէօվ . . . :

— Կեեա՞ս:

— Հըպա ի՞նչ անեմ, քշտիյ մի գէօրծ ունիմ անելիք:

— Լաքին րէճա կանիմ կիւճէնմիշ չըլլիք:

Քաւ լիցի էֆէնտըմ:

Ու մեկնեցաւ:

Ե. Մ. ԳՈՒՑՈՒՄՃԵԱՆ

ՏԻԲԼՈՍԱՍԸԶ ԽԱԲԵԲԱՅ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ

(Շարունակութիւն 15 րիւէն)

Իւղի վաճառականը միւսիւ Տիմիթրաքի յուզուեցաւ եւ սրտին մէջ կասկած մը ծագեցաւ կնոջը ըրած խօս-քերէն, բայց խաբեքայ փաստաբանը պաղարիւնութիւնը չկորսնցնելով՝ ընկերոջը դարձաւ եւ ըսաւ:

— Եսարնտան թէզի եօգ, պու գարընըն իլամ խար-ճը պէշ լիւսսընը կէօթիւր վէր տէ, իլամընը ալ կէթիւր էլինէ վէր. իշթէ խարճը տա ճէպիմիգաէն վէրիօրուզ:

— Քա՛, աս ի՞նչ կըսէ. նէ գատար խարճ վար ըսա րէշին ալմա՛տըն . . . :

— Գըսսա քէս, եարըն պու վազըթլար կէլ իլամը-նը ալ:

— Պէնիմ իս բոթէ՞ եաբաճապի:

— Սէնին իշին եարըն պիթմիշ տիր:

— Սինեօր, եալրում, սէնին իշին գաթը պու կիւն-տէն պիթմիշ տիր. մեղք որ ասոնց ծառքը ինկար:

— Հատտի լիսանը թէճաճուզ խիւօրսուն արթըք, եարըն կէլ իլամընը ալտա պիր տահա պուրաեա կէլմէ:

— Կէլ տէսէն քիմ կէլիր. վո՛ւյ, մէյ մը ազատէի ծեռվունուդ, ամենայն փրկչին պոյճա մոմ մը պիտի վառէի:

Վերջապէս իւղի վաճառականը հայ կնկան հետ վա-ղուան գալուն որոշում տալով մեկնեցան:

— Եսհու արգատաշ, պու գարը պիղիմ իշիմիգի պօղաճազ:

— Ատամ սէնտէ նէ ետփապիլիր :

— Հէրիֆին միտէսի պուլանտը կիպի կէօրտիւմ :

— Իսթէտիկի գատար պուլանտըն , փարալարը ալ-մա'տըք մը :

— Օրասը էօյլէ . չիմտի էյի եա , պու գարը եարըն կէլիպ իլամը իսթէրսէ նէ՝ ետփաճաղըզ . տահա արգու-հալընը պիլէ եազմատըք :

— Էսկի հէօճէթ , եա իլամ սուրէթլէրի եօ՞գ մու , պիր թանէ վէրիւրիզ էլինէ :

— Պիրինէ օգութո՞ւրսա :

— Օգութունճահա գատար պիլզտէ պուլանտն ալըպ եիւրիւլի վէրիւրիզ :

Երկրորդ օրը ցերեկ առոհն մեր խաբեքայ փաստա-բանը իր գրասեղանին պուլըն նստած՝ իբրեւ սաստիկ զբաղեալ , չատ մը եղբայրներ խառնեղու ատեն , իւզի վաճառականը միւսիւ Տիմիթրաքին սենեակէն ներս մը-տաւ :

— Վա՛յ . . . էֆէնտիւմ , միւսիւ Տիմիթրաքի , խօշ կէլտիւրիզ , պուլանտըն . . . էֆէնտիւմ պիլզ սիզին իչի-նիլի աղնատըք . . . :

— Նէսքէ :

— Շիմտի զաթընըզ 550 լիրայա 21 կիւնէ պիր պօ-նօ վէրմիշսինիզ :

— Պուալօ՛ , սօսթա ինէ :

— Բօսթա կիւնի՞ւ միւ վէրտիւրիզ :

— Եօգ ատրֆէ , սանքիւմ թամամ տէմիսիւմ :

— Տօղրու , հալ պու քի , մէզքիւր պօնօյը եաղըն ֆէնա չըգմասընտան թահրիր իթմիշ օլմատըղընտան , պիր միւվաճէնէ նազըր թէվէլիւտ իթմիշ :

— Պու քի սէօվլէրսին պուլեո՞ւզ ատամ տըր :

— Քի՞մ . . . :

— Նա պու , ախսը միւթէվէլի ,

— Խայըր միւրվէթքեարըմ , նազըր , եանի քէէնլէ-մէէօքիւն հիւքմիւնտէ գալմըզ :

— Գալօ աղնամիսիւմ :

— Իմտի , գէյլ գանուըն թիճարէթին ֆի 14 թշրինի սանի 1294 թարիխի ֆըրասընտա , սէօյլէր քի , աչըզ պօնօլարըն պէրրէն վէ պահրէն իւսթլէրի էօրթիւլէճէկի կիպի , մահքէմէի թիճարէթ հուզուրուհա ինզար իտիլէ-պիլիր . հաթթա , Մէճէլլէտէ տէ շէրայիթը էսասիլէնէ թաթպըզ օլուհմազ տէյօր . . . աղնատը՞ն մը :

— Պիլմէմ պրէ գարտաս :

— Հա իշթէ օ տէմէք տիր քի , սիզին իչիւն մահ-քէմէնին վէրտիլի գարար մուվաֆըզ տէյիլ տըր :

— Պրալօ՛ . . . :

— Շունտան տա պէլլի քի , իսթինաֆէն պու տա-վայա պէտ վէ մուպաշըրէթ օլուհուհօր . աղնաշըլտը՞ մը էֆէնտիւմ :

— Թուրքճա պիլմէմ պըրէ գարտաս :

Միւսինոյն ժամանակ կինը սենեակէն ներս մտաւ :

— Պարեւ , իլամա առի՞ր :

— Հա , էյի քի կէլտին . իշթէ իլամըն չու , պաշգա պիր իշին գալմատըեա :

— Օղջ ըլլաո , էյ չիմտի պու քեհատը նէ՞րէյէ կէօ-թիւրէյիմ :

— Նէրէյէ կէօթիւրիւրսէն կէօթիւր , պէնիւմ պօր-ճու միւմը չըգարթմագտը պաշգա շէյ թանըմամ :

— Էյ չիմտի պուլանտ կեսուրուհա կէօթիւրիւրսէմ էվտէն չըգա՞ր :

— Պէն օրալարը պիլմէմ , իլամ տէյի՛լ մի իտի իս-թէտիլին , իշթէ սանա իլամ :

— Քա աղէկ ա , չիմտի պուլանտ նէ՞ ետփաճաղըմ , սէն պանա ծու սէօյլէ :

— Սանտըղընա գօյ սաղլա , նէ վաղըթ լաղըմ օ-լուրսա՛ օ վաղըթ կէօթէրիւրսին :

— Քա մեղա , իշտէ պէնտէ ծու աղնամաք իսթէ-րիւմ . չիմտի պուլանտ կէօթէրսէմ նէ չըգա՞ր :

— Կէօթէրտիկին կիպի իշ պիթէր տէեօրում , նի-չիւն աղնամահօ՞րսուն :

— Վո՛ւյ , սաղ ըլլաւ ըսելով կնիկը դուրս ելաւ :

— Շիմտի կէլէլիւմ , քիրիլէ , սիզին իշինիզէ , պու կիւն ինզարընը կէօնտէրտիք , կէլէճէք չարշէմպի՛ կիւ-նիւ մուհաքէմէնէ կիրէճէյիզ . ֆաղաթ պիր ըէֆիք տա-հա ալմալը , գէրէ պու իշ պիրաղ զօրճա :

— Մա պու ֆի՞ք , քի՞մ տիր :

— Ֆիկ տէյիլ , ըրէֆիք , եանի տէմէք իսթէյօրում քի , պիր ապուգաթօ պէնի իլէն պարապար :

— Պու ապուգաթօ տա պիլզիւմ իսէ պագածա՞ք :

— Շիւպհէ՞ մի վար , էվվէթ , պէն քէնտիսինի կէօր-տիւմ , օն լիրատան աչաղը կէլմէմ տէյօր . նիհայէթ իչի էնանէսիլլէ աղնաթտըմ իսէ , պէշ լիրահա գապուլ էթտի :

— Ուստա պու ապուգաթօ :

— Էֆէնտիւմ պու պիրինճի , պէնտէն տէ չօգ ուստա :

— Գալօ , կէօնտէր պու սէնին ուսաք մաղաղիտա վէրէյիմ :

— Ուշաղըն կէլմէսինէ հաճէթ հօզ , եարըմ սաաթ սօղրա օլ թարաֆտա զաթէն իշիւմ վար , պէն օղրար ա-լըրըմ :

— Գալօ , մա պու Ղուրդուլիտի տէրսամ քի պօնօ կիւնիւ կէցմէս , էվէլ նիցին խապէր վէրմէտի . . . :

— Ֆասիտ էֆէնտիւմ , ֆասիտ . շէր՛ը գանուըն թի-ճարէթտէ պաք նէ տէյօր , — Թիւճճար օլան պիր քիմսէ վէլէվ մուամէլէյի թիւճճարիյէ իչիւն տօղրուտան տօղ-րուհա օլմայըպ , ֆաղաթ օ մուամէլաթ ատիյէթի օլան պիր խուսուս եա սէպէպլէ իթասը մէճհուլ գալան պիր մատտէտէն տօլայը իթա իթմիշ օլտուղը սէնէտին համի-լի՞ օլ թիւճճարը մահքէմէի թիճարէթ հուզուրուհա ին-զար էաէպիլիր . . . (1)

— Պուալօ՛ , է՛ , գալինիիտաս :

— Ամա աղնատըն , տէտիլիմտէ նէ ճան վար :

— Աղնամիսիւմ , ատիօ ըսելով խեղճ մարդը դուրս ելաւ :

(Շարունակելի)

ԴԻՌԻՄ

(1) Թէ որ բան մը հասկցաւ նէ Աստուած պէլաս տայ :

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՏՌԱՄՆԵՐ

(Շարունակութիւն 15 թիւէն)

— Շատ աղէկ մարդ է եղեր որ խօսքիդ հաւատացեր է:

— Վերջը չեկաւ որ, չե՞ս ըսեր որ կօշկակարն ալ դէմս ելաւ:

— Կօշկակարին ստակները մինչեւ հիմայ չե՞ս տուեր:

— Ըսաւ որ . . .

— Երկու տարի է ի վեր մարդը չօլուիներուդ չօճուխներուդ ինծի քեզի յիսուն չիֆթ բօթին չինեց . . . անոնց փարան չտուիր: Աստուծմէ գտնաս:

— Ըսի որ քանի մը օր համբերէ, գալ չարթու քեզի մէծիտիէ մը կուտամ:

— Աս ինչ քէփաղէութիւն է. . . վախ, վախ, վախ:

— Անկից կծիկը զրի, խանութս գացի եւ մինչեւ իրիկուն տասը փարայի առուտուր չըրի, ոչ միս կրցի առնել, ոչ հաց ոչ ալ պանիր, բարեկամներուս գացի, քանի մը մէծիտիէ փոխ ուղեցի, բարեկամներս ալ չունէին որ տային, ասկէ վերջը գէշութիւն եկաւ վրաս՝ մարելու պէս եղայ եւ գացի ծովեզերեայ խահուէ մը նստայ, նարկիլէ մը խմեցի, Հասկցա՞ր հիմայ ուշ գալուս պատճառը:

— Հասկցայ:

— Ճամբան գաղնիքէն կըսէի որ կնիկս խնդում եւրեսով դէմս պիտի ելլէ, թեւս պիտի մտնէ եւ զիս վերը պիտի նստեցնէ, դիմացս պիտի նստի, ինծի պիտի մխիթարէ . . .

— Հոգըս հատեր էր . . . ինծի ո՞վ մխիթարէ պիտի . . . դուն ինծի մխիթարելու ես, դուն իմին խեղճութեանս պատճառ եղար . . . բոլոր օրը աշխատէ . . . հողիդ հանէ, իրիկունս ալ աղան մխիթարելու է եղեր . . . ուշաուրտութեամբ . . . աս ինչ պէլայի հանդիպեցանք . . . քէշկէ չկարգուէի, տունը նստէի:

— Մտքէս կըսէի որ կրնիկս դժբախտութեան կէսը վրան պիտի առնէ եւ ասանկով տէրտու քիչ մը պիտի թիթեւնայ:

— Արդէն բոլոր դժբախտութիւնն իմ վրաս է. դժբախտութիւն մ'ալ դուն ես . . .

ԿԱՄԱՑՈՒԿ

(Շարունակելի)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Նախընթաց Դ. օր Սանասարեան վարժարանի խնամակալութեան նիստէն վերջ, Ս. Պատրիարք Հայրը Կայս. Պալատ երթալով, անսակցեցաւ Ա. քարտուղար Թահսին պէյի հետ:

— Վեհ. Սուլթանը գնահատելով գորգի հանրածանօթ վաճառական Ջարմայր էֆ, Ճշմարտախօսեանի մատուցած ծառայութիւնը՝ գորգագործութեան բնիկ արուեստին մէջ, բարեհաճած է Դ. կարգի Մէծիտիէ պատուանշան շնորհել անոր: Կայս. այս Բարձր գնահատութիւն անշուշտ ուրախութեամբ պիտի ընու երիտասարդ վաճառականին բոլոր բարեկամներուն սիրտը: Ջարմայր էֆէնտի Ճշմարտախօս, ողբացեալ Միքայէլ փաշայի օրով, ի պաշտօնէ երկիցս այցելած է Հէրէքէի Կայս. գործարանն, եւ գորգի ճիւղին զարգացման եւ ներկարանի բարեօրոյման միջոցներուն վրայ անդեկագրեր մատուցած է որք գնահատուած են: Վերջին անգամ ալ Առեւ-

տրական Սենեկին կողմէ անդամ կարգուած էր այն ծանօթ Յանձնաժողովոյ որ Անաստուրի մէջ գործուած գորգերուն աղնուայման եւ մանաւանդ ներկարաններու բարեօրոյման միջոցները քննեց: 25 տարուան հասուն փորձառութիւն մը եւ կարեւոր զիրք մը զոր կրցած է գրաւել հայ վաճառականութեան պատուաւոր դասուն մէջ, իրաւամբ արժանացած են բարձրագոյն գնահատութեան:

Սամաթիոյ Հայ Հռովմէականաց եկեղեցւոյ Պատ. Թաղական Խորհրդէն հետեւեալը ղրկուած է ի հրատարակութիւն:

Ա Զ Դ

Յաւուր կիւրակէի ի 25 Հոկտեմբերի, ի տարեդարձի Վկայութեան Տեսան Երանելոյն Կոմիտասայ Բանաստեղծի, Սամաթիոյ Անարատ Յղութիւն Ս. Սատուածածնի ժողովրդապետական Եկեղեցւոյ մէջ, ի ժամ 4¹/₂ (ը. թ.) հանդիսաւոր Զայնաւոր Ս. Պատարագ պիտի մատուցուի:

Յաւարտ Պատարագին ըստ սովորութեան Տօնախմբութեան, Հանդէսը Երանելոյն Շիրմին վրայ պիտի կատարուի ի Պալըզլը:

Զայդ ծանուցանելով բարեպաշտ եւ հաւատացեալ Հասարակութեան, խնդրի՝ հոգեւոր հանդիսիս հաճին մաճակցիլ:

Սամաթիա 19 Հոկտեմբեր 1898

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հազարապետ Մարչանի Ֆաշտայի մէջ գտնուելուն համար Անգղիոյ եւ Ֆրանսայի միջեւ ծագած վէճն այս շաբթու նուազ սաստիկ թուեցաւ: Հինգշաբթի Ֆրանսական դեսպան Պառն Բուռսէլ Լորտ Սալպորիի հետ երկար տեսակցութիւն մը ունեցաւ խնդրոյն վրայ, եւ առ հասարակ կը կարծուի թէ կարգադրութեան հիմ մը գտնուած է: Այս գաղափարն ունին Անգլ. ապահովագրան ընկերութիւններ, վասն զի մեծապէս զեղչեցին պատերազմի վտանգներուն դէմ նաւեր ապահովագրելու սակը, որ անցեալ շաբթու բարձր էր: Միւս կողմէ Ֆրանսայի Մովային Նախարարը դադրեցուցած է արձակուրդի հրամանագրեր տալ նաւային սպաներու, եւ հրամայած է Պրէսթ զրկել գտնուած ծովային ամէն զինուորներ: Անգլիոյ նաւատորմին ալ նոյնպիսի հրամաններ տրուած են Մովային Նախարարութեան կողմէ: Հետաքրքրութիւն կը չարժէ հազարապետ Մարչանի մեկնումը Ֆաշտայէ, ուր թողուց իր մարդիկը ստորակարգ սպայի մը հրամանին ներքեւ: Հազարապետ Մարչան մեկնած է դէպ ի Գա-հիրէ, ուր պիտի ժամանէ, կ'ակնկալուի այս հինգշաբթի: Ֆրանսական կառավարութիւնը փութաց ըսել թէ ես կոչուած չէ ան, այլ առանց հրամանի մեկնած է Ֆաշտայէ: Հաւանօրէն նոր միջադէպ մը պատահած է ի Ֆաշտա եւ հանրութենէն գաղտ կը պահուի մինչեւ որ հազարապետ Մարչան կարող ըլլայ այդ մասին իր պաշտօնական տեղեկագիրը տալ Ֆրանսական կառավարութեան: Հարկւորապէս Պարսիէ որ կը բերէ Մարչանի տեղեկագիրը՝ անցեալ չորեքշաբթի ժամանեց Փարիզ եւ չաբաթ դարձեալ մեկնեցաւ իր կառավարութեան հրահանգները տանելու Մարչանի, ի Գահիրէ:

— Ռուսական թերթեր, Հապէշաստանի խաղաղութիւնը վրդովող Անգլ. կարծեցեալ մեքենայութիւններու ի տես, Ռուս կառավարութենէն կը խնդրեն Հապէշաստանի գործերուն խառնուիլ:

ԿՈՐՈՒՍԵԱԼ ԿՏԱԿԸ

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ԳԼՈՒԽ Ը.

ԱՆՅՈՒՍԱՆԻ ԶՈՒԴԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

— Պ. Սուչո Կիրգա Պ. Օհանի եւ Գուլայի հետ անձայն ու լռիկ ընթերիէ յետոյ. նոյն օրուան պարապ յողնութեանց վրայ խորհրդակցել սկսան եւ գուշակելով սր Տիմիթրո եւ Պետիլ անպատճառ Պ. Օհանը կը փնտռեն կտակը դարձեալ իրենց ձեռքն անցնելու համար, որոշեցին որ հետեւեալ օրը Պ. Օհան իր իսկական կերպարանքովը զանոնք փնտռէ եւ Պարոն Կիրգա ու Գուլա ի մօտոյ իրեն հետեւին, վտանգի ժամանակ իրեն օնենելու համար :

— Հետեւեալ առաւօտ Աստիկ աղա Պէօլուքաէրէի քարափէն արագօրէն քաշելով գէպի նաւամատոյց կ'երթար, երբ տեսաւ որ հաճի կարապետ իր առջեւ յուշիկ յուշիկ կ'երթայ ստիպողական գործի մը միջոցին խոչնդոտի մը հանդիպող մարդու մը նման սրանկողութեան շարժում մ'ընելով իր ընթացքն յամրացուց :

— Պարոն Կարապետ իր ետեւէն եկող արագ քաշուածքի մը յանկարծ ընդհատուէն հետաքրքրուելով ետին դարձաւ եւ Պարոն Օհանը տեսնելով գոչեց :

— Օհ, Աստիկ աղա, ո՛ր բարով նորէն ասանկ կանուխ :

— Պօլիս կիջնեմ, պատասխանեց Պ. Օհան. կարուկ կերպիւ :

— Է՛, ի՞նչ կայ, աճապարանքդ ի՞նչ է, զեռ չոգե՜նաւուն գալուն կէս ժամ կ'ուզէ :

— Բայց կը վախճամ որ վերջը կը փախցնեմ :

— Նորէն զարմանալի խօսքերու սկսար, կէս ժամ կայ կ'ըսեմ եւ դու հինգ վայրկեանի ճամբայ ունիս. Բեգի բտն մը պիտի զրուցեմ, բայց չպիտի մերժես գիտեմ որ շատ խելահաս մարդ ես քեզ հետ տեղ մը պիտի տանիմ :

— Ո՛ւր, հաճի Աղաս խենդեցա՛ր, ես չողնաւի պիտի հասնիմ ստիպողական գործ ունիմ կըսեմ, դուն ալ քեզ տեղ մը տանիմ կըսես :

— Հոգի՛ս, Աստիկ աղաս, ինչո՞ւ պարապ խօսքեր կընես, հոս՝ մօտը տուն մը պիտի երթանք միասին եւ ապա չոգենաւին պիտի հասնինք, ես ալ անգործ մարդ չեմ, գործ ունիմ :

Պ. Օհան տեսնելով որ օձիքը չպիտի կարենայ ազատել այդ բարի ընտանեւէր մարդուն ձեռքէն ակամայ հաւանութիւն տուաւ եւ հարցուց :

— Որո՞ն տունը պիտի երթանք, ես օտարի այցելութիւն չեմ տար զիտցած եղի՛ր :

— Ի՞նչ օտար, եղբայր, հոգիս, մարմինս է, սա անցեալ իրիկուն պատմածս, քեզի ըսի կարծեմ թէ աշխարհիս վրայ միակ մտատանջութիւն մ'ունիմ :

— Զեմ յիշեր, պատասխանեց. պարզապէս Պ. Օհան իր մտազբաղ վիճակին մէջ :

— Տէր ողորմեա, այս առտու ի՞նչ ես եղեր Աստիկ աղա, անցեալ իրիկուն չըսի թէ մէկ հոգ մ'ունիմ Զօրաս իրեն սիրած աղջկան հետ ամուսնացնել :

— Այո՛, այդ է ըսածդ, գիտեմ արդէն անցեալ իրիկուն ըսիք, պատասխանեց Պ. Օհան ուշաբերելով :

Հա՛, հիմա անոր տունը պիտի երթամ եւ կուզեմ որ դու ալ մէկ տեղ գաս եւ կարծիքդ յայդնես :

— Շատ աղէկ պատասխանեց պարոն Օհան, բայց ի ներքուստ սպասկապէս բարկացած էր, եւ կ'անիծէր իր բաղդը որ այսպէս անակնունկի խօչնդոտներ կը յարուցանէր իր դէմ :

Պարոն Կարապետ իր հաւանութիւնն ստանալէ վերջ գոգցես կը վազէր եւ իր բարեկամը գրեթէ քաշելով կը տանէր :

Երբ Բիրիքօ փողոցին բերանը հասան, հոն մօտն եւ բարի հայրն՝ իր բարեկամը Տիկին Մայրէնէի տունը տաբաւ :

Ստիկինի իր պարտական ըլլալուն համար փոքր ինչ շիկնելով դուռը բացաւ եւ երկու այցելուները վեր հրաւիրեց :

Երբ պարոն Կարապետ այդ տան դուռը զարկաւ մէկէն ի մէկ պարոն Օհանի սրտեղութիւնը փարատեցաւ, յիշեց թէ Պետիկ այդ տան թիւը նայած եւ օրիորդի մը այդ տունը մօտելը լրտեսած էր, ուստի իր ուշադրութիւնը լարեց :

Տիկին Մայրէնէի գտնուած սենեակն ելնելով, պարոն Կարապետ հարցուց :

— Ի՞նչպէս էք, Տիկին Մայրէնէ, յայտնի ցաւեր չէք զգար կ'արծեմ :

— Շնորհակալ եմ, Հաճի աղա, ո՛չ մարմնի ցաւեր չունիմ, բայց սրտիս ցաւը միթէ կը մարի՞, եւ աշխրը լեցուեցան, այլ Հաճի աղային հետ օտարական մը զրտնուելուն համար չկրցաւ ազատօրէն արտասուել եւ իր հեծկտուքները կոկորդին մէջ խեղդուեցան :

Պարոն Օհան Մայրէնէ անունը լսելով, սկսաւ ուշի ուշով տառապեալ կինը զննել :

— Աստուծմէ յոյսերնիս չկտրենք, սիրելի՛ս ամենէն մեծ մեղքն ան է, հարկաւ օր մը պիտի ողորմի, ըսաւ պարոն Կարապետ :

— Ա՛հ Միհրանս, Հաճի աղա, Միհրանս հիմա հասուկ տղայ մը եղած էր :

— Մեռած տղայ ունի՞, հարցուց պարոն Օհան իր բարեկամին :

Զէ, եղբայր, ասիկա զարմանալի բան մ'է, քանի որ դու ալ զարմանալի մարդ մ'ես հարկաւ այս խնդիրը կրնաս լուծել. տես, բացատրեմ ըստծս, եւ ապա Տիկին Մայրէնէի կողմը դառնալով յարեց. Աստիկ աղան օտար չէ, բարեկամ մարդ է, անոր միւր դժբաղդութիւնը պատմելով աւելի կը շահինք քան թէ կը կորսնցնենք :

Տիկին Մայրէնէ տխրագին ժըպիտով մը համակերպութիւն յայտնեց :

— Աստիկ աղա, Տիկին Մայրէնէն Բերայի հրդեհին ութը տարեկան մանչ զաւակ մը ունէր որ այդ աղետալի հրդեհին օրը կամ գողցան եւ կամ կորսուեցաւ :

Շարունակելի

(Հաստատեալ յամին 1852)

ՏՐՔ. Ս. ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ ԵՒ ՈՐԴԻ**ԱՄԵՐԻԿԵԱՆ - ԱՏԱՄՆԱԲՈՅԺՔ**

Թիւ 396, Մեծ-Փողոց Բերա

(Եանիի՝ Քարեջրասան վրայի յարկը, ճիւղ 2ըպուհնեանց դէմ)

Կատարելագործեալ գործիքներու միջոցաւ ամենասատիկ ցաւած ակռաներն մեկ անգամեւ կը լիցուին, ցաւով դիմելու եւ բուժուած վերադառնալու պայմանաւ:

Նորահար եղանակաւ, նուրբ, ճաշակաւոր եւ դիմացկուն արհեստական ակռաներ կը պատրաստեն, յար եւ նման բնականի, դեմքի ձեւաւորութիւն ըստ սարիքի, ծամողութիւն, եւ ազատ արտաւանդութիւն երաշխաւորեալ:

Բերնի հիւանդութիւնք կատարելապէս կը բուժուին, ինչպէս նաեւ թմրեցուցիչ դեղերու, եւ ամենակատարելագործեալ աքցաններու միջոցաւ առանց ցաւի աստմանահանութիւն:

Յ. Գ. Զմեռները կիրակի օրերն ալ, (մինչեւ կէս օր), ինչպէս նաեւ ամեն օր, (մինչեւ կէս գիշեր) հիւանդ կ'ընդունին Բերայի գործատեղին:

ՊԵՍԿ ԿՍՄ ԱՅԲԲԵՆԱՐԱՆ

Հայերէն գրերն հսկայ մեծութեամբ ստուգած են լաւ թղթի վրայ, քերականէ առաջ գործածելի, մանկապարտէզներու՝ նոյն իսկ տան մէջ՝ ուր մանուկն սկսած է խօսիլ: Մեծ պակաս մը կը լինու իւր զանազան ձեւի տակ գործածելու յարմարութեամբը, այնպէս որ կարելի է պատի, տախտակի կամ խորանարդ փայտերու վրայ փակցնել եւ կամ մկրատելով իրարու յօդել եւ կազմել վանկ, բառ եւն:

Ա. Պնակ. բոլորագիր եւ թուանշանք

(գրերուն մեծութիւնն է $5\frac{1}{2}$ սանթիմ) Գին 1 Ղր.

Բ. Պնակ. գլխագիր եւ կէտեր

1 Ղր.

ԳՐԱՑԱՆԿ

ՊԱՂՏԱՏԼԵԱՆ ԳՐԱՏԱՆ

ԳԻՆ 2 ՂՐ.

Բացի սոյն գրատան գրքերէն որոց իւրաքանչիւրին համար մասնաւոր ծանօթութիւններ դրած են, կը պարունակէ նաեւ այլ եւ այլ կարեւոր հրատարակութիւններ ինչպէս թղթատարութեան վերաբերեալ կարեւոր գիտելիք եւ սակացոյց: Դրոշմաթղթի կանոնագիր եւ սակագիրն են: Եւն:

ԷՔԻԹԱՊԼ
(ՄԱՅՈՒՆԱՆ ԱՆՉԱԳԱՅ)
ԱՇԽԱՏԻՍ ԷՆ ՀԶՕՐ
Կենաց Ապստոլագրական ընկերութիւն
Երաշխաւորեալ Գրատարութիւն
1 ՄԵԼԻՍ 227 ՄԵԼԻՍ ՅՈՒՄԲ
Ներկայացուցիչ Կ. Պօլսոյ
ԳԱՌՆԻՍ ԱՌՏՈՒԱԾԱՆՈՐ

Ա Զ Դ



Ազգ. Հիւանդանոցի սեպհական մաքառա դերձաններն ըստ առաջնոյն կը վաճառուին Սուլթան համամ Մարտիկ էֆէնտի Շիրինեանի վաճառատունը, կեդրոնատեղի Ազգ. Հիւանդանոցին սրկառի թղթին:

Այս առթիւ կը խնդրուի Արգոյ հասարակութենէն որ փութան փորձել այս դերձաններն, Փորձառու եւ մասնագէտ անձինք հաստատած են առաւելութիւնը հրապարակի վրայ գտնուած առաջնակարգ դերձաններէն:

Փորձեցէք եւ անմիջապէս պիտի տեսնէք առաւելութիւնը:

Եւ միանգամայն օգնած պիտի լինիք Ս. Փրկչի Ազգ. Հիւանդանոցի հարկւրաւոր խեղճ եւ անկար պատրաստարեւոյ:

Դրատուն Գ. ՊԱՂՏԱՏԼԵԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

Սուլթան Համամ ձառեւի, Թիւ 14

Արտօնատէր Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Վ. ՄԻՆԱՍԵԱՆ

Կ. Պօլսոյ, Սուլթան Համամ 14.